



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 25 » սեպտեմբեր 2019 թվական

N 109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ԳԵՐԱՍԻՄԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին կողմից 2019 թվականի օգոստոսի 19-ից 21-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքում և 2019 թվականի օգոստոսի 23-ին կազմվել է հողերի օգտագործման և պահպանման խախտումների N14 ակտը: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը օգտագործվում են որպես վարելահողեր (կադաստրային ծածկագրեր՝ 02-079-0117-0003, 02-079-0117-0004):

Խախտվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 27-ի N06-13-14 որոշումը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի ղեկավար Վարդգես Գերասիմի Ներսիսյանի (ծնված՝ 16.06.1965 թ., ՀՀ նույնականացման քարտ 008887085, տրված 21.03.2016թ. 054-ի կողմից) նկատմամբ կիրառել վարչական տույժ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝

պետական բյուջեի 900005001517 հաշվեհամարին (Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաշվեհամարին):

2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի ղեկավար Վարդգես Գերասիմի Ներսիսյանին ողջամիտ ժամկետում վերացնել Հողերի օգտագործման և պահպանման խախտումների N14 ակտի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում հայտնաբերված խախտումները:

3. Սույն որոշումը երեք օրվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի ղեկավար Վարդգես Գերասիմի Ներսիսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի ղեկավար Վարդգես Գերասիմի Ներսիսյանին հանձնելու պահից, որը կարող է բողաքարկվել դատական կարգով՝ 15 օրվա ընթացքում:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և ողջօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետին՝ Արայիկ Ռոմիկի Հակոբյանին:

9/25/2019



X *Gevorgyan Davit*

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ